ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

127
(2977)

21 սեպտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՇՈՒՆԸ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ ՆԱԵՎ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոմիտասի շուկայի փակման վերաբերյալ տեղեկատվական հրաբուխը կարծես թե հանգել էր, սակայն առաջիկայում նոր ժայթքումներ են սպասվելու:

Ինչից սկսվեց Կոմիտասի շուկան օտարելու գործընթացը.

2024 թվականի մարտին նախորդ դարից ստեղծված Կոմիտասի շուկայի աշխատակիցներին հայտնեցին գույժը. պետք է ազատեն շուկայի տարածքը: Աշխատողներն անելանելի վիճակում էին հայտնվել, չգիտեին ինչ անել, ուր գնալ:

Հաջորդեց անհնազանդության, բողոքի մեծ ալիք: Կոմիտասի շուկայում որոշ վաճառողներ ապրանքը վաճառում են արդեն 30-40 տարի, տարածքին սովորել են, ունեն իրենց մշտական հաճախորդները:

Նրանք փորձել են սեփականատիրոջից պարզել, թե ինչն է խնդիրը, ինչու պետք է լքեն տարածքը այսքան տարիներ անց, սակայն տնօրենությունը լռության է մատնել վաճառողների հարցերը:

Կոմիտասի շուկայում շուրջ 70 վաճառող կա: Նրանց մի մասը գյուղից են բերում իրենց ապրանքը եւ վաճառում, մի մասն էլ վերավաճառողներ են: 70 անձ՝ այս շուկայում առեւտուր անելով է պահում իր ընտանիքը, սակայն իշխանությունը նրանց առանց եկամտի է թողնում:

Չբավարարվելով գյուղատնտեսության ոլորտը կոլապսի բերելով՝ իշխանությունը նախ հարձակվեց փողոցային առեւտրով զբաղվողների վրա, ապա ներխուժեց շուկաներ:

Ստացված լուրերից հետո բողոքի ակցիաներ իրականացվեցին, որից հետո մամուլը գրեց, որ Կոմիտասի շուկան գնել է GTB Holding-ը, որը նաեւ կառուցում է Արարատի մարզի մետաղագործական գործարանը:

Իրավիճակը կարծես թե «լռել» էր, բայց վաճառողների ձեռքը զարկերակին է. եւս մեկ քայլ՝ ընդդեմ Կոմիտասի շուկայի, եւ բողոքի ակցիան ու անհնազանդությունը կրկին կհյուրընկալվեն Երեւանի փողոցներ:

Աշունը թեժանալու է նաեւ Կոմիտասի շուկայի վաճառականների համար. առջեւում գուցե տհաճ անակնկալներ լինեն:

Հաջորդիվ կներկայացնենք քաղաքաշինական եւ ճարտարապետական հնարավոր աղճատումները, որոնք սպասվում են նոր սեփականատիրոջ պայմաններում:



Այն, որ էկոնոմիկայի նախարարն արգելում է պետական միջոցներով գործընկերներին նվերներ գնել, ընդունելի եւ գովելի է, սակայն Ազգային ժողովի համար նման օրենքը «չգրված օրենք» է. գնումներ են կատարում եւ պահեստավորում: Բանն այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով Ազգային ժողովի գնումները, նկատեց՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության կազմակերպման համար հուշանվերների ձեռքբերման նպատակով ԱԺ-ն ծախսել է 5 մլն 470 հազար դրամ: Գնման պայմանագրի համաձայն՝ գրեթե 5,5 մլն դրամ արժողությամբ ձեռք է բերվել կերամիկական ափսե, նվեր ափսե, հուշանվեր սալիկներ: Կերամիկական ափսեներն արժեցել են 2 մլն 400 հազար դրամ, որի միավորի գինը 24 հազար դրամ է, եւ ձեռք է բերվել 100 հատ: Նվեր փաթեթի մեկ հատն արժեցել է 17 հազար 700 դրամ, որը ներառել է մեղրամոմով մեղր, խոտաբույսերով թեյ եւ իմունոթեյ: 100 նման սալիկի համար Ազգային ժողովը վճարել է 1 մլն 770 հազար դրամ: Հուշանվերներ սալիկների մեկ հատն արժեցել է 13 հազար դրամ, գնվել է 100 հատ: Սալիկները եղել են 4 տեսակի զարդանախշերով՝ Արծվագորգ 2 տեսակ, Թագի գորգ 2 տեսակ: «Ժողովուրդ» օրաթերթը Ազգային ժողովի Հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության պետ Լաուրա Անտոնյանից փորձեց պարզել, թե գնումը որ պաշտոնական պատվիրակության համար է արվել, արդյոք այն եղել է Միջխորհրդարանական միության երիտասարդ խորհրդարանականների 10-րդ գլոբալ համաժողովի մասնակիցների համար, թե ոչ. եւ ստացանք հետեւյալ պատասխանը. «IPU-ի համար չի եղել գնումը: Կազմակերպչական նպատակահարմարությունից ելնելով, սովորաբար, նախապես գնում ենք տարբեր նվերներ, պահեստավորում ենք՝ հետագայում ԱԺ այցելող տարբեր պատվիրակություններին նվիրելու համար»: Մինչեւ տարեվերջ ուշադիր կլինենք՝ հասկանալու համար՝ ինչ պատվիրակությունների է նվիրելու 300 տարբեր տեսակի հուշանվերները Ազգային ժողովի ղեկավարությունը:

Նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանի առանձնատան վրա արձակված կրակոցների գործով միակ մեղադրյալ Հարություն Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է: Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց նաեւ նրա պաշտպան Վաչե Դավթյանը: Ասել է թե՝ իրավապահները, քննելով դեպքը, եկել են այն համոզման, որ նա չի կրակահերթ արձակել Ասիլյանի տան ուղղությամբ. ուստի հարց է առաջանում՝ ապա, ով կամ ովքեր կրակոցներ արձակեցին ՔՊ նախկին անդամի տան ուղղությամբ ու փորձեցին նրան բան «հասկացնել»: Հիշեցնենք, որ կրակոցների դեպքից առաջ Ասիլյանին հեռացրել էին իշխող ՔՊ-ից: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործով միակ կալանավորվածի խափանման միջոցը փոխվել է, եւ նա ներկայումս ընդամենը վարչական վերահսկողության տակ է: Ու սա էլ դեռ քիչ չէ՝ միակ կալանավորվածը պնդում է, որ կատարվածի հետ կապ չունի: Իսկ ահա, նախկին ՔՊ-ական Թաթուլ Ասիլյանը իրավապահներին հայտնել է, որ որեւէ մեկին չի կասկածում իր տան կրակոցների գործով եւ չի կարողանում հասկանալ, թե ով կարող էր նման բան անել: Հիշեցնենք՝ այս տարվա հունվարի 14-ին կրակոցներ էին արձակվել ՔՊ-ից հեռացված Թաթուլ Ասիլյանի տան վրա, ու դատելով իրավիճակից՝ դեպքը մնում է չբացահայտված:

Հայաստանի Հանրապետությունն այսօր նշում է Անկախության օրը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեում Հայաստանի ժողովուրդը ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու եւ անկախ պետություն ստեղծելու օգտին: 1991 թվականի հենց այս օրը կազմակերպվեց հանրաքվե, որին մասնակցեց Հայաստանի բնակչության ավելի քան 95 տոկոսը. իսկ հանրաքվեի մասնակիցների 99 տոկոսից ավելին «Այո՛» ասաց անկախությանը, «Այո՛» պատասխանեց՝ «Համաձա՞յն եք, որ Հայաստանը լինի անկախ, ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս» հարցին: 2 օր անց արդեն Հայաստանի Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով հանրաքվեի արդյունքները, հռչակեց Հայաստանի Հանրապետությունն անկախ պետություն: Անկախության հռչակումից 33 տարի անց Մայր Հայաստանը իր անկախությունը նշում է առանց հայկական երկրորդ պետության, դեռ ավելին՝ Հայաստանի ինքնիշխան տարածքում Ադրբեջանի ապօրինի ներխուժման պայմաններում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր Երեւանի վարչական շրջաններում համերգ-միջոցառումներ կլինեն: Պարգեւներ, կոչումներ կշնորհվեն տարբեր բնագավառների ներկայացուցիչների: Հիմնական միջոցառումը լինելու է երեկոյան. Հայաստանի պատմության թանգարանում կբացվի «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով միջազգային ցուցահանդեսը, որի շրջանակում Հայաստանում առաջին անգամ կցուցադրվեն Անահիտ դիցուհու հայտնի բրոնզե արձանի գլուխն ու ձեռքը, որոնք պահպանվում են հեղինակավոր Բրիտանական թանգարանում: Սակայն որեւէ այլախոհ, որեւէ ընդդիմադիր, հրավիրված չէ այդ միջոցառումներին: «Ժողովուրդ» օրաթերթին վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը հայտնեց, որ Նիկոլ Փաշինյանը մասնակցելու է անկախության տոնի միջոցառումներին:

ԶՐՈՒՅՑ

ԲԱՔՎԻ ԲԱՆՏԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆրանսիական Le Figaro պարբերականը ծավալուն հոդված է հրապարակել Բաքվում պահվող հայ բանտարկյալների մասին՝ նշելով, որ հայկական անկլավի ռազմական նվաճումից մեկ տարի անց ռազմագերիները, որոնց թվում են նաեւ Արցախի ութ նախկին պաշտոնյաները, շարունակում են աղօրինաբար պահվել Բաքվի բանտերում.

«Արդեն մեկ տարի է, ինչ նրանք կալանավորված են եւ սպասում են դատավարության, որը մինչ օրս տեղի չի ունեցել: Բաքվի բանտերում 23 հայ ռազմագերիներ սպասում են իրենց ճակատագրի որոշմանը: Բանտարկյալները՝ քաղաքական գործիչներ, քաղաքացիական անձինք եւ զինվորականներ, գերեվարվել են, ադրբեջանական իշխանությունների ձեւակերպմամբ, «հակաահաբեկչական գործողությունից» հետո, որը 2023 թվականի սեպտեմբերի 19-ին եւ 20-ին հանգեցրել է Լեռնային Ղարաբաղի ամբողջական բռնակցմանը:

Նրանց թվում են Արցախի Հանրապետության ութ նախկին քաղաքական առաջնորդներ, որոնք բարձր պաշտոններ են զբաղեցրել Լեռնային Ղարաբաղում, որն իր ամբողջ բնակչության՝ դեպի Հայաստան արտաքսումից հետո 2024 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես դադարել է գոյություն ունենալ: Բաքվի իշխանությունները զգուշացրել են. այս նախկին պաշտոնյաները պետք է պատասխան տան իրենց «հանցագործությունների համար»: Ահաբեկչություն, անջատողականություն, ռազմական հանցագործություններ, անօրինական զինված խմբավորումների ձեւավորում... Ինչպես այս տարվա հունվարին հայտարարել է Ադրբեջանի գլխավոր դատախազ Քեմրան Ալիեւը, նշված մեղադրանքները բազմազան են եւ ներկայում «հետաքննությունների» առարկա են հանդիսանում: Այդ ժամանակից ի վեր դատական գործերից ոչ մի նորություն չկա, եւ ռազմագերիների ազատ արձակվելու հնարավորությունները գնալով նվազում են:

Այս ռազմագերիներից, անկասկած, ամենահայտնին Ռուբեն Վարդանյանն է, որը հաճախ է հայտնվում մեդիայի ուշադրության կենտրոնում: Այս միլիարդատերը, որը 2024 թվականին առաջադրվել է Խաղաղության Նոբելյան մրցանակի, հատկապես հայտնի է իր «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությամբ: 2020 թվականի պատերազմից հետո, երբ Ադրբեջանը վերահսկողության տակ վերցրեց Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի 70%-ը, չորս երեխաների հայր հանդիսացող բարերարը որոշեց հեռանալ Ռուսաստանից՝ տարածաշրջանում բնակություն հաստատելու եւ հայ բնակչությանը օգնելու նպատակով:

Մինչեւ 2023 թվականի սեպտեմբերն արցախահայության կրած 9-ամսյա շրջափակման ընթացքում Ռուբեն Վարդանյանը, դառնալով պետական նախարար, բազմապատկեց միջազգային օգնության կոչերը: Նա կալանավորվել է 2023 թվականի սեպտեմբերի 27-ին, երբ արցախցի շուրջ 100 հազար հայերի հետ միասին փորձում էր հատել Հայաստանի սահմանը:

Այնուհետեւ կալանավորվել են նախկին նախագահներ Արայիկ Հարությունյանը, Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Աժ նախագահ Դավիթ Իշխանյանը եւ նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը, ինչպես նաեւ զինվորականներ Լեւոն Մնացականյանն ու Դավիթ Մանուկյանը:

Նրանց բոլորի դատավարությունն արդեն երկու անգամ հետաձգվել է:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԲԱՔՎԻ ԲԱՆՏԻՑ

Բաքվի բանտում հարցաքննության ժամանակ Ռուբեն Վարդանյանին հարցեր են ուղղել Հայաստանի վարչապետի վերջին ասուլիսի ժամանակ Վարդանյանի հասցեին հնչեցված հայտարարության կապակցությամբ: Ընտանիքի հետ հեռախոսազանգի ժամանակ ստանալով հաստատում, որ նման հայտարարություն իսկապես հնչել է, Ռուբեն Վարդանյանը խնդրել է հանրության համար բաց ձեւաչափով փոխանցել իր հետեւյալ խոսքը.

«Առաջին հերթին՝ յուրաքանչյուր մարդ ուրիշի գործողությունների մասին դատում է՝ ելնելով իր կյանքի մոդելներից եւ սկզբունքներից:

Երկրորդը՝ եթե վարչապետն ինձ ինչ-ինչ հարցեր ուներ, նա հնարավորություն ուներ դրանք ինձ ուղղելու 2022 թվականի նոյեմբերին մեր վերջին հանդիպման ժամանակ, երբ ես նաեւ պետնախարարի պաշտոնն էի զբաղեցնում: Ամեն դեպքում, ես անգամ հիմա եմ պատրաստ, իմ ներկայիս հնարավորությունների իրավիճակում, պատասխանել նրա ցանկացած հարցի:

Երրորդը՝ ցանկանում եմ վարչապետին հիշեցնել, որ 2018թ. գարնանը, երբ մենք առաջին անգամ գործընկերներով, չորս հոգով հանդիպեցինք նրա հետ, ես անկեղծորեն նրան երեք կետ ներկայացրեցի, որոնք պահպանել եմ ու շարունակելու եմ պահպանել.

1. Մենք գործընկերներով չենք ցանկանում եւ չենք միջամտի Հայաստանի քաղաքականությանը:

2. Մենք զբաղվում ենք բարեգործությամբ՝ անկախ Հայաստանի իշխանությունների նկատմամբ վերաբերմունքից, քանի որ մենք դա անում ենք ժողովրդի համար: Ինձ համար մարդկանց օգնելը մնում է կարեւոր հարց եւ կարեւոր մարդասիրական առաքելություն:

3. Միակ բանը, որ կարող է փոխել իմ այդ մոտեցումը, Արցախի ճակատագիրն է:

2020 թվականի պատերազմն ու Արցախի նկատմամբ շարունակվող սպառնալիքը ինձ համար շրջադարձային եղան, ինչի մասին ես բազմիցս բաց ու հետեւողականորեն հայտարարել եմ: Այդ ժամանակից ի վեր իմ բոլոր գործողությունները թելադրված էին Արցախի եւ նրա ժողովրդի ճակատագրի նկատմամբ մտահոգությամբ:

Հիմա մեր ժողովուրդն ապրում է իր պատմության ամենաբարդ ու ծանր շրջափուլերից մեկը, բայց ես շարունակում եմ հավատալ, որ չնայած դժվարություններին ու տարաձայնություններին, մենք կկարողանանք հաղթահարել այս փուլը եւս ու կառուցել խաղաղ ու լուսավոր ապագա»:

Ռուբեն Վարդանյանի գրասենյակ

ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌԴ ԱԳՆ-ն մեկնաբանել է ՆԱՏՕ-ի անդամ երկների հետախուզական ծառայությունների բարձրաստիճան ներկայացուցիչների՝ հաճախակի դարձած այցերը Բաքու: Խոսքը, մասնավորապես, Պենտագոնի հետախուզական վարչության Եվրոպական-Եվրասիական տարածաշրջանային կենտրոնի ղեկավար Պատրիկ Փրայորի եւ մի քանի օր անց Մեծ Բրիտանիայի հետախուզական MI6 ծառայության ղեկավար Ռիչարդ Մուրի այցերի մասին է:

«Անկասկած, ագրեսիվ ռազմական բլոկի՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ներկայացուցիչների նման այցերը չեն նպաստում տարածաշրջանում անվտանգության եւ կայունության բարձրացմանը: Բոլորս շատ լավ հասկանում ենք՝ Արեւմուտքի ջանքերն ուղղված են ՌԴ-ի հետ հարեւան երկրներում իրավիճակի ապակայունացմանը: Մեր ադրբեջանցի եւ ԱՊՀ շրջանակում մյուս գործընկերների հետ կշարունակենք բացատրել ՆԱՏՕ-ի հետ համագործակցության խորացման ռիսկերը», - ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՄՐԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովի լսումներում «Ադրբեջանին առնչվող բոլոր փաստերը բացահայտորեն խեղաթյուրվում եւ կեղծվում են», հայտարարել է Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայությունը:

«Սա եւս մեկ դրսեւորում է այն բանի, թե ինչպես են ԱՄՆ Կոնգրեսում որոշ խմբեր բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով Ադրբեջանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ, մարդու իրավունքների քողի տակ խեղաթյուրում իրավիճակն Ադրբեջանում:

Նման միջոցառումները, որտեղ Ադրբեջանին վերաբերող բոլոր փաստերը բացահայտ խեղաթյուրված եւ կեղծված են, անցկացվում են ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունները սրելու նպատակով»,- ասված է հայտարարության մեջ:

ԱՄՆ Կոնգրեսի մարդու իրավունքների հանձնաժողովում լսումներ են անցկացվել «Մարդու իրավունքները Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի անկումից հետո» խորագրով, որին հրավիրված էին նաեւ Արցախի ներկայացուցիչներ:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՀԵԶԲՈԼԼԱՀ»-Ի ՂԵԿԱՎԱՐԸ՝ ՆԵԹԱՆՅԱՀՈՒԻՆ

Իսրայելը երբեք չի կարողանա իր վերաբնակիչներին վերադարձնել երկրի հյուսիս. այս մասին ասել է լիբանանյան «Հեզբոլլահ» շարժման ղեկավարը՝ դիմելով Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուին:

«Իրականում մենք էլ ավելի շատ իսրայելցիների կվտարենք իրենց տներից», - սպառնացել է Նասրալլահը: 2023-ի հոկտեմբերին Իսրայելի հյուսիսից 150,000 բնակիչ տարհանվել էր ՀԱՄԱՍ-ի հարձակումից հետո: Նեթանյահուն բազմիցս հայտարարել է, որ իր նպատակն է այս մարդկանց իրենց տները վերադարձնելը, բայց անվտանգային լարված իրավիճակը թույլ չի տալիս:

«Սպասում ենք, որ Իսրայելը կմտնի Լիբանան, գիշեր-ցերեկ սպասում ենք նրանց տանկերին, ասում ենք՝ «բարի գալուստ»: Մենք կարծում ենք, որ Լիբանանի տարածք ցանկացած ներխուժումը պատմական հնարավորություն է, որը մեծ ազդեցություն կունենա կռվի ընթացքի վրա», - հավելել է Հեզբոլլահի ղեկավարը:

Իրավիճակը Մերձավոր Արեւելքում կտրուկ սրվել է հուլիսի 31-ին Թեհրանում ՀԱՄԱՍ-ի քաղբյուրոյի ղեկավար Իսմայիլ Հանիեի սպանությունից հետո, որին նախորդել էր Բեյրութում իսրայելական հարվածից «Հեզբոլլահ»-ի բարձրաստիճան հրամանատար Ֆուադ Շուքրի սպանությունը: Իրանը եւ «Հեզբոլլահ»-ը խոստացել են վրեժ լուծել նրանց մահվան համար: Իսրայելն ու «Հեզբոլլահ»-ը գրեթե ամենօրյա ռեժիմով հարվածներ ենի հասցնում իրար:

ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՁՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավարտվել են Ղազախստանում անցկացված «Անսահման եղբայրություն-3» բազմազգ զորավարժությունները՝ Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքիայի, Պակիստանի, Քաթարի եւ Ուզբեկստանի հատուկ նշանակության ուժերի մասնակցությամբ:

Զորավարժությունների փակման արարողությունը, որին մասնակցել է 400-ից ավելի զինվորական, տեղի է ունեցել Ղազախստանի Թուրքեստանի շրջանի «Օրդա» զորավարժարանում:

Նշվել է, որ, ըստ ծրագրի, հատուկ նշանակության ջոկատները հմտորեն կատարել են սահմանը խախտած պայմանական ապօրինի զինված խմբավորումների վնասազերծման, հրամանատարական բարձունքների գրավման, էլեկտրոնային պատերազմի կիրառմամբ անօդաչու թռչող սարքերի խափանման, ինչպես նաեւ պաշտպանության նպատակով օդային հետախուզություն իրականացնելու խնդիրները:

Վերջում պարգեւներ են հանձնվել զորավարժություններում աչքի ընկած զինծառայողներին:

ՓԱՍՏԵՐ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆԵՐՆԵՐԻ ՀԵՏ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՄԲ Է ԶԲԱՂՎԱԾ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ֆինարկմանը հարցեր է ֆինարկել, որոնք նախ եւ առաջ պետք է ֆինարկի սեփական թիմի համար, ոչ թե երկրի:

Վարչապետը հրապարակել էր տեսանյութ եւ կից գրել. «ՔՊ-ում այսօր ինքնաքննադատության օր էր. քննարկման թեմաները մեր անհաջողություններն էին հակակոռուպցիոն պայքարում, դատաիրավական ոլորտում, կադրային քաղաքականության մեջ: Հետեւությունն այն էր, որ սխալները պետք է ուղղել «թացը չորին չխառնելու» տրամաբանությամբ»:

Նիկոլ Փաշինյանը բազմիցս հայտարարել է, որ աջակցում է ինքնաքննադատությանը: Այո՛, լավ բան է ինքնաքննադատությունը, սակայն պետք է որոշել, թե որ լսարանի առաջ է պետք ելույթ ունենալ:

Իսկ ովքեր էին երեկ տեղի ունեցած քննարկմանը Նիկոլ Փաշինյանի «լսարանը»:

Արփի Դավոյան. 2018 թվականին ՀՀ ՊԵԿ քննչական վարչությունում քննվել է մի գործ, որով անցել է Արփի Դավոյանը: Նախնական տեղեկություններով՝ նա ՍՊԸ-ներ է հիմնադրել, ինչ-որ ներկրումներ արել, ապա խաբել պետությանը: Նա 2018 թվականի ապրիլից հետո ՊԵԿ քննչականում անգամ հարցաքննվել է: Այժմ Արփի Դավոյանը քրեական գործով վկա է անցնում:

Արսեն Թորոսյան. Նա անցնում է 2020-ին՝ քովիդի համավարակի ժամանակ, քովիդի դեմ պայքարի համար կառավարության պահուստային ֆոնդից հատկացված ավելի քան 26 միլիարդ դրամը ոչ միայն արդյունավետ չօգտագործելու, այլեւ ծախսը պատշաճ չվերահսկելու ու չլանավորելու վերաբերյալ քրեական գործով: Բացի սա, Արսեն Թորոսյանի ընտանիքի ձկնաբուծարանի վերաբերյալ քրեական գործ էր հարուցվել:

Ալեն Սիմոնյան. Չմոռանանք Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջ քրեական գործը, երբ Ալեն Սիմոնյանը գործը քննող դատավորին ծաղիկներ էր նվիրում, իսկ որոշ ժամանակ անց ՀՀ Քննչական կոմիտեի ղեկավար Արգիշտի Քյարամյանի եւ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորմամբ գործը կարճվեց: Սակայն հարկ է արձանագրել, որ Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, ընդունել էր մեղքը եւ իր փաստաբանի միջոցով խնդրել էր դատախազությանը գործուն զղջման հիմքով կարճել հարուցված վարույթը:

Գնել Սանոսյան. ՀՀ ՏԿԵ նախարարի թոշակառու մայրիկի 230 հազար դոլարանոց տան մասով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ուսումնասիրություն է սկսել, սակայն ամիսներ շարունակ հրապարակված ոչ մի եզրակացություն չկա: Ավելին՝ Գնել Սանոսյանի ծնողների համար առանձնատուն կառուցելու օրինականության ստուգման գործընթացը կանգ է առել:

Ռուստամ Բաքոյան. Պատգամավորը տարիներ շարունակ բռնության էր ենթարկել կնոջը, ծեծել եւ հարվածներ էր հասցրել: Ավելի ուշ Ռուստամ Բաքոյանը պնդում էր, որ նախկին կնոջը չի ծեծել. կապտուկների փաստն էլ չի մեկնաբանել:

Անահիտ Ավանեսյան. ՀՀ Առողջապահության նախարար Ավանեսյանի մորը պատկանող «Ուիգմոր» ԲԿ-ում 2024 թվականի ապրիլ-մայիս ամիսներին հակակոռուպցիոն կոմիտեն համատեղ գործողություններ էր իրականացնում ԲԿ-ում: Բանն այն էր, որ ԲԿ-ի բացումից օրեր անց պետությունը հիվանդանոցին հատկացրել էր 600 մլն դրամ գումար:

Ահա, թե ինչպես է Նիկոլ Փաշինյանի ՔՊ-ական թիմը պատկերացնում կոռուպցիայի դեմ պայքարը. ինքնաքննադատությունը, իսկ կարճված բոլոր գործերն իշխանության քայլն է դեպի կոռուպցիայի դեմ պայքարի ուղղի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵԽ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿՈՉԸ

Բոլոր նրանք, ովքեր այցելելու են Բաքու՝ մասնակցելու COP29-ին, պետք է իրենց բարոյական պարտքը համարեն՝ կոչ անել ապահովել բռնի տեղահանված անձանց վերադարձը Լեռնային Ղարաբաղ եւ պատանդների ազատ արձակումը:

Այս մասին ԵԽ նիստում ասել է Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Նատալի Լուազոն:

Նա հիշեցրել է, որ մեկ տարի առաջ Ադրբեջանն իրականացրել է ռազմական հարձակում Լեռնային Ղարաբաղում եւ բռնի տեղահանել ավելի քան 100 000 մարդու:

Այս կերպ, ըստ Լուազոյի, պատմության մեջ ամրագրվել է 21-րդ դարի առաջին էթնիկ զտման հետքը, եւ մեկ տարի անց ոչ մեկ դեռեւս հնարավորություն չունի վերադառնալու իր տուն:

«Ադրբեջանը շարունակում է պատանդ պահել նախորդ հակամարտության գերիներին: Լեռնային Ղարաբաղի հոգեւոր եւ մշակութային ժառանգությունը սպառնալիքի առջեւ է կանգնած, բազում հուշակոթողներ արդեն իսկ ոչնչացվել են: Ադրբեջանը չի ստորագրել խաղաղության համաձայնագիր Հայաստանի հետ եւ մի քանի շաբաթից հյուրընկալելու է «COP29» համաժողովը: Բոլոր նրանք, որոնք այցելելու են Բաքու, իրենց բարոյական պարտքը պետք է համարեն՝ կոչ անելու ապահովել վերադարձը Լեռնային Ղարաբաղ եւ ազատ արձակել պատանդներին»,- նշել է Լուազոն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՇԱՀԱՌՈՒՆ Է. ԶԱԽԱՐՈՎԱ

Հայաստանը հանդիսանում է ԵԱՏՄ գլխավոր շահառուն, եւ այս տարվա առաջին կիսամյակում ապրանքաշրջանառությունը կազմել է 8,3 մլրդ դոլար՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Այս մասին սեպտեմբերի 20-ի մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ ընդգծելով, որ դա հաստատել է նաեւ ՀՀ վարչապետը, սեպտեմբերի 18-ին հայտարարելով, որ Հայաստանը չի պլանավորում կրճատել ապրանքաշրջանառության ծավալները եւ խզել կապը ԵԱՏՄ-ի ու Ռուսաստանի հետ:

ԶԱՏՈՒԼԻՆԸ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Փաշինյանը վերանայում է ոչ միայն Ռուսաստանի հետ հարաբերությունները, այլեւ ամբողջ հայկական էությունը. նման կարծիք է հայտնել Պետդումայի ԱՊՀ հարցերով հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինը:

Նրա պնդմամբ՝ ՀՀ վարչապետը կարծում է, որ պետք է մոռանալ հայ ժողովրդի հերոսական պայքարի, Հայոց ցեղասպանության զոհերի մասին, ասել է Զատուլինը:

«Նա ցանկանում է համոզել հայերին, որ նույնիսկ Հայաստանի եկեղեցին, որը պետականության բացակայության պայմաններում պահել եւ պահպանել է հայ ժողովրդին, Բյուզանդական կայսրության ժամանակներից օտար գործակալ է եղել», - ասել է պատգամավորը:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԻՆՉՊԵՍ Է Ռ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆԸ ԽՈՒՍԱՓԵԼ ՀԱՐԿԵՐ ՎՃԱՐԵԼՈՒՑ

«Ն եւ Ս ֆոնսթրաքշն» բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ համալիրի սեփականատերը՝ Ռուբեն Կարախանյանի շուրջ ստեղծված աղմկահարույց դատմությունների մասով մեր հետաքննությունը շարունակվում է:

Երեկ կառավարության շենքի մոտ բողոքի ակցիա էին իրականացրել Անաստաս Միկոյան 64 հասցեի բնակիչները ու պահանջում էին, որ պատկան մարմինները լուծում տան, թե ինչ խախտումներով են բնակվում նորակառույց շենքում:

«Ն եւ Ս քոնսթրաքշն» բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ համալիրի սեփականատերը՝ Ռուբեն Կարախանյանն է, ով քաղաքի տարբեր մասերում տարբեր շենքեր է կառուցում:

Եվ նրա շուրջ պարբերաբար աղմկահարույց բացահայտումներ են իրականացվել:

2023 թվականի հուլիսի ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչության ոլորտային թիվ 8 բաժնի աշխատակիցներն օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Երեւանի Անաստաս Միկոյան փողոցի հասցեներից մեկում՝ բազմաբնակարան շենքերի կառուցապատման գործունեություն իրականացնող ՍՊ ընկերության կողմից, բնակարանների գնման իրավունքների պայմանագրերում բնակարանների արժեքները ցածր նշելու, ինչպես նաեւ բնակարանները ֆիզիկական անձանց անվամբ ձեւական գրանցելու եւ հետագայում առավել բարձր արժեքներով այլ անձանց օտարելու միջոցով պայմաններ են ստեղծվում հարկման օբյեկտները թաքցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու համար:

Իրականացվող օպերատիվ հետախուզական միջոցառումների ընթացքում, ՍՊ ընկերության վաճառքի գծով փոխտնօրեն Հ.Ս.-ի հետ ենթադրյալ գնորդը ձեռք է բերել պայմանավորվածություն առ այն, որ 110 քմ մակերեսով բնակարանի գնման իրավունքի արժեքը կազմելու է 176.000 ԱՄՆ դոլար, որից 38.000 ԱՄՆ դոլարը պետք է վճարել կանխիկ եղանակով: Ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ վաճառքի գծով փոխտնօրենն ուղարկել է նոտարական վավերացման ենթակա պայմանագրի օրինակը: Նույն օրը, Երեւանի նոտարական գրասենյակներից մեկի մոտ, ենթադրյալ գնորդը 38.000 ԱՄՆ դոլարը կանխիկ եղանակով վճարել է բնակարանի գնման իրավունքի ձեւականորեն սեփականատիրոջը՝ Մ.Ա.-ին, որը գումարը փոխանցել է իր հետ գործարքի կատարման վայր ներկայացած Գ.Ս.-ին, ով հանդիսանում է ՍՊ ընկերության վաճառքի գծով փոխտնօրենի հայրը:

«Հսկիչ գնում» օպերատիվ հետախուզական միջոցառումն իրականացնելուց հետո մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ՍՊ ընկերության առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նախապատրաստությանն օժանդակելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով նոտարական գրասենյակի մոտակայքից Մ.Ա.-ն եւ Գ.Ս.-ն, իսկ ՍՊ ընկերության գրասենյակից Հ.Ս.-ն, օպերատիվ տարբեր խմբերի կողմից, անմիջապես ձերբակալվել եւ բերվել են ՊԵԿ ՀՕՀ վարչություն: Հաստատվել է, որ ՍՊ ընկերությանը պատկանող բնակարանի գնման իրավունքը նախապես ձեւականորեն գրանցվել է ֆիզիկական անձ հանդիսացող Մ.Ա.-ի անվամբ՝ հարկման օբյեկտը թաքցնելու նպատակով, հետագայում այն վերջինիս անունից առավել բարձր արժեքով օտարելու համար:

Միաժամանակ հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննչական գլխավոր վարչություն՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ՍՊ ընկերության առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նախապատրաստություն կատարելու վերաբերյալ: Ներկայացվել են ձերբակալված անձինք ու համապատասխան փաստաթղթերը: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Իրավապահները չէին նշել, թե ով է հայտնի ընկերությունը: Վերոնշյալ հասցեում բազմաբնակարան շենքեր է կառուցել «Ն եւ Ս քոնսթրաքշն» բազմաբնակարան-բազմաֆունկցիոնալ համալիրի սեփականատեր Ռուբեն Կարախանյանը, որը այսօր բնակիչներին հասցրել է կառավարության շենքի մոտ ու նրանց բարձրացրած խնդիրներին լուծում չի տալիս:

Իսկ թե ինչ եղավ քրեական վարույթի վերջը, կիմանանք շարունակելով մեր հետաքննությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՏԱՐԵՑ ՊԱՊԻԿԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ Ծիծեռնակաբերդի միջադեպի գործով: Տեղեկությունն «Ժողովուրդ» օրաթերթին հաստատեց փաստաբան Արայիկ Պապիկյանը՝ հայտնելով, որ նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործն ուղարկվել է դատախազին այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ միակ մեղադրյալը 67 տարեկան տարեց պապիկ, ԱԺԲ անդամ Տիգրան Դրմեյանն է: Նա շարունակում է մնալ միակ մեղադրյալն ու գործը գնում է դատարան, տեսնենք, թե ինչ կլինի դատարանում:

Հիշեցնենք, որ 2024թ. ապրիլի 24-ին՝ «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «դավաճան», «հողատու»: Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր:

Արդյունքում՝ մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու, եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՎԵՐՆԻՍԱԺԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 19-ին՝ ժամը 21:33-ին, «Վերնիսաժի» մոտ շուրջ 40 անձանց միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել, եւ կրակոցի ձայներ են լսվել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ իրավապահները պարզել են, որ ժամը 21:00-ին Հանրապետության փ. 58 հասցեի մոտ Ա. Հ.-ն իր ընկերների հետ միասին վիճաբանել է 16 տարեկան անչափահաս Վ. Վ.-ի եւ վերջինիս ընկերների հետ, ինչը վերածվել է ծեծկռտուքի, որի ժամանակ, ըստ ականատեսների, օդաճնշիչ ատրճանակից արձակվել են կրակոցներ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դեպքի վայրից հայտնաբերվել է 3 պլաստմասե գնդակ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՀՈԳԵԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՎԱՏԱՑԵԼ Է. ԱՀԱՋԱՆԳ՝ ԲԱՆՏԻՑ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պահվող քաղաքացին բաց նամակ է ուղարկել «Ժողովուրդ» օրաթերթին, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Ես՝ Վանիկ Դանիելյանս, կալանավորվել եմ նախորդ ամսվա 30-ին, այժմ գտնվում եմ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կալանքի տակ եւ ներկա պահին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում:

Նախ ասեմ՝ 1 տարում 2 անգամ հակակոռուպցիոն օպերները եկել, հարցրել են, զանգել եմ, ասել են՝ գործ կա, արի, չեմ գնացել, ոչ մի անգամ պաշտոնական ոչ մի գրությունով չեմ ծանուցվել, ոչ մի անգամ քննիչ Նիկոլայ Պավլովը չի ուղարկել ծանուցում. անօրինական կերպով իր ընկեր դատախազ Հայկ Մանասյանի հետ որոշում են բերման ենթարկել: Օրենքով չեմ ծանուցվել ոչ մի անգամ, եւ որոշել են բերման ենթարկել: Նախ, ես որ քաղաքում եմ եղել, գրեթե միշտ՝ տանը, դրա բերման ենթարկելը ո՞րն է, ու այժմ իմ հոգեկան վիճակը վատացել է, անվասայլակին եմ: Ես եմ, որ խափանման միջոցս կալանքի չեն փոխում՝ թեկուզ տնային:

2-րդ խմբի հաշմանդամ եմ, հաշվառված եմ «Ավան» հոգեբուժարանում ու այժմ վատ վիճակում եմ, չեմ կարողանում ինքնուրույն շարժվել, լողանալ, խափանման միջոցը, միեւնույնն է՝ չեն փոխում:

Խնդրում եմ՝ տպագրեք, թող նույնիսկ միջազգային ատյանները տեսնեն»:

ՎԵՃ՝ ՕԴԱՆԱՎՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին՝ ժամը 16:15-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին հաղորդում է ստացվել, որ օդանավակայանի ստերիլ գոտում վիճաբանություն է:

Գծային բաժնի քրեական հետախույզները պարզել են, որ Երեւան-Մոսկվա չվերթի նստեցման ժամանակ վիճաբանություն է ծագել ուղեւորի եւ ավիաընկերություններից մեկի երկու աշխատակցի միջեւ: Այդ ընթացքում նրանք փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց, հայհոյանքներ հնչեցրել, ինչի պատճառով օդանավակայանի ստերիլ գոտում խաթարվել է բնականոն աշխատանքը:

Ինչպես հայտնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից, վիճաբանության երեք մասնակիցներն էլ ձերբակալվել են եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել քննչական բաժին:

Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 122 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՐՈՇԵԼ ԵՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼ

Դիլիջան համայնքի ավագանու՝ սեպտեմբերի 13-ի նիստում համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի «ՀՀ Լոռու եւ Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետեւանքով ՀՀ Լոռու եւ Տավուշի մարզերի մի շարք համայնքներում աղետի գոտիներ հայտարարելու, դրանց տարածքները սահմանելու եւ բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներն իրականացնելու մասին» թիվ 772-Ն որոշմամբ կառավարության կողմից վերականգնվել է Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Ծատուրյան փողոցի աջ կողմի հենապատը: Հենապատի եւ հարակից պատերի հետագա փլուզումները կանխարգելելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տվյալ հատվածում կատարելու Աղստեւ գետի հունի (մոտավորապես 500մ երկայնքով) մաքրման աշխատանքներ, մասնավորապես՝ մաքրել ծառերից, աղբից եւ տեղափոխել համապատասխան աղբավայր:

Համայնքի ավագանին որոշել է համաձայնություն տալ Դիլիջան համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ վերոնշյալ աշխատանքների կատարման համար: Դիլիջանի համայնքապետարանը ինչո՞ւ անցած տարիներին, այս տարվա ամռան ամիսներին չի ձեռնարկել Աղստեւ գետի հունի մաքրում այնտեղ աճած, մեծ բարձրություն ունեցող ծառերից, տարատեսակ աղբից, որ աշնանն է սկսում այդ գործը:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԵԼՈՒ Է

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի մաս կազմող, Ոսկեպարի երկու ճանապարհների խաչմերուկից մինչեւ Ոսկեվան գյուղի մուտքի խաչմերուկ հատվածում սեպտեմբերի 16-ից ճանապարհաշինարարները ասֆալտի շերտը քերում են, որ ասֆալտաատում անեն: Այդ ճանապարհը հիմա էլ վատ վիճակում չէ: Աշխատանքների համար նախատեսված է 215 միլիոն դրամ, մրցույթը շահել է «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ն: Ջանգահարեցի այդ ընկերության տնօրեն Մուկուչ Տիտանյանի բջջային հեռախոսահամարին, որպեսզի տվյալներ իմանամ կատարվող աշխատանքների մասին: Սակայն իմանալով , որ խոսողը լրագրող է, Մ. Տիտանյանը, ասաց, որ հեռախոսահամարի պահով սխալվել եմ: Սահմանազատման անվան տակ նախկինում ադրբեջանաբնակ Բաղանիս-Այրում գյուղի տարածքները, գյուղի մոտակա պաշտպանական դիրքերը հանձնվել են Ադրբեջանին, նշված ճանապարհի ասֆալտապատումը կատարվելու է Ադրբեջանին հանձնված դիրքերի դեմ-դիմաց, դրանցից մոտ 200-250 մետր հեռավորությամբ: Մնում է հուսալ, որ ադրբեջանական զինուժը կրակ չի բացի, չի խոչընդոտի ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ՔԼԻՆԹՈՆ»Ը ԿԿԱՅԱՆԱ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

«ԱՎՐՈՐԱՆ» ԿՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՔՈՑԱՌՄԱՆԸ

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը կմասնակցի «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության (Clinton Global Initiative (CGI)) 2024թ. Տարեկան միջոցառմանը:

«Քլինթոն» համաշխարհային նախաձեռնությունը համախմբում է գործարար ոլորտի, կառավարության, քաղաքացիական հասարակության առաջնորդներին մի շարք խնդիրների լուծման ուղղությամբ առաջընթաց գրանցելու նպատակով, այդ թվում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն, ներառական տնտեսական աճ եւ վերականգնում, առողջապահական հավասարություն, կանանց եւ աղջիկների լիարժեք ներգրավածություն, մարդասիրական ջանքերը գլոբալ ճգնաժամերին:

«Ավրորան» կմասնակցի «Նորարարություններ ճգնաժամի ժամանակ» խորագրով քննարկմանը, որը կարեւորում է աշխարհում խոցելի իրավիճակում գտնվող բնակչության վրա ազդող գործոնների հաղթահարման շուրջ նոր գաղափարների դիտարկումը: Բանախոսներն են Չելսի Քլինթոնը՝ Քլինթոնի հիմնադրամի փոխնախագահ եւ «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամ, Արմինե Աֆեյանը՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար, եւ դոկտոր Իֆթիքեր Մահմուդը՝ Բանգլադեշի կանանց եւ երեխաների «Հույս» հիմնադրամի հիմնադիրը:

«Մեր մասնակցությունը «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության ամենամյա միջոցառմանը թույլ է տալիս միավորել ուժերն աշխարհի ամենահայտնի առաջնորդների եւ բարեփոխումներ իրականացնողների հետ, որոնք մեծ նվիրումով ջանքեր են գործադրում դիմակայելու մեր ժամանակի ամենահրատապ մարտահրավերները», - ասաց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար Արմինե Աֆեյանը: «Ընդհանուր երկխոսության եւ նպատակաուղղված քայլերի միջոցով մենք նպատակ ունենք կարեւորել նրանց, ովքեր ներկայացնում են մարդկության լավագույն շերտը՝ մարդկանց, որոնք խիզախորեն գործում են՝ փրկելու ուրիշներին եւ փոփոխություններ իրականացնելու իրենց համայնքներում եւ դրանից դուրս»:

««Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը լույս է սփռում հումանիտար առաջնորդների վրա, որոնք բարեփոխում են իրենց համայնքները», - նշեց «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության գլխավոր գործադիր տնօրեն Գրեգ Միլնը: «Մեզ համար մեծ պատիվ է այս տարի եւս համագործակցել «Ավրորայի» հետ: Մենք անհամբեր սպասում ենք նրանց դիտարկումներին, թե ինչպես մենք կարող ենք առաջընթաց գրանցել գլոբալ մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ»:

Բացի «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության 2024թ. տարեկան միջոցառմանը մասնակցելուց, «Ավրորան» Նյու Յորքում նախաձեռնել է Aurora Dialogues քննարկում՝ «Մարդասիրական կարիքներ. ընդհանուր ռազմավարություններից դեպի կոնկրետ գործողություններ» խորագրով: Խաղաղության միջազգային օրը կարեւորելով՝ այն տեղի կունենա Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի միջոցառումներին զուգընթաց:

Ի ՀԻՇԱՏԱԿ

74 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է ԱՐՏԱՇԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԸ

74 տարեկանում կյանքից հեռացել է Արտաշես Գեղամյանը:

Արտաշես Գեղամյանը ծնվել էր 1949թ. դեկտեմբերի 2-ին Երեւանում:

1971թ. ավարտել է Երեւանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը: Ճարտարագետ-էլեկտրիկ: 1988-1990թթ. եղել է ԽՄԿԿ կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայի ունկնդիր (Մոսկվա):

1971-1978թթ. աշխատել է Երեւանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետի կոմերիտական կազմակերպության ազատված քարտուղար, Կարելիայի Ինքնավար Հանրապետությունում Հայաստանի հանրապետական ուսանողական շինջոկատի հրամանատար, ՀԼԿԵՄ կենտկոմում հրահանգիչ, Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի կոմերիտական կազմակերպության առաջին քարտուղար, ՀԼԿԵՄ կենտկոմի ուսանող երիտասարդության բաժնի վարիչ: 1979-1987թթ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի ապարատում աշխատել է հրահանգիչ, սեկտորի վարիչ, տեսուչ, կենտկոմի առաջին քարտուղարի օգնական, կուսակցական-կազմակերպական աշխատանքների բաժնի վարիչի առաջին տեղակալ: 1987-1989թթ.՝ ՀԿԿ Երեւանի Մաշտոցի կուսշրջկոմի առաջին քարտուղար: 1989-1990թթ. եղել է Երեւանի քաղաքապետ: 1991-1995թթ.՝ «Անդրնավթգազշին» ԲԸ դիտորդական խմբի անդամ, հիմնադրել է «Պրոմեթեւս» հայկական ունիվերսալ սակարանը, «21-րդ դար» ՍՊԸ-ն, եղել է այդ հիմնարկների գլխավոր տնօրեն:

1997թ. հիմնադրել եւ գլխավորում է «Ազգային Միաբանություն կուսակցությունը»:

1998, 2003 եւ 2008թթ. եղել է ՀՀ նախագահի թեկնածու:

1995-1999թթ.՝ ԱԺ պատգամավոր (թիվ 7 ընտրատարածք): ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

1999-2003թթ.՝ ԱԺ պատգամավոր (համամասնական ընտրակարգ, «Իրավունք եւ միաբանություն» դաշինք): ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ: «Իրավունք եւ միաբանություն» խմբակցության ղեկավար:

2003-2007թթ.՝ ԱԺ պատգամավոր /համամասնական ընտրակարգ, ԱՄ կուսակցություն/: ԱՄ խմբակցության ղեկավար: Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովում ՀՀ պատվիրակության, «Պառլամենտականները գլոբալ գործողության համար» միջազգային խորհրդարանական կազմակերպության անդամ:

2007-2012թթ. ղեկավարել է «Ազգային Միաբանություն կուսակցությունը»:

2012թ. մայիսի 6-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցությունից:

2017 թվականի ապրիլի 2-ին պատգամավոր է ընտրվել ՀՀԿ ցուցակով:

2019 թվականից այլեւս պատգամավոր չէր:

Ամուսնացած էր, ունի 2 զավակ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 2 մարդ զոհվել է, 11-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԴԵՊՔ

Ապօրինի փայտանյութի տեղափոխման կանխարգելմանն ուղղված Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ու ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների համատեղ հետեւողական միջոցառումների ընթացքում Արարատի մարզի Արբաթ բնակավայրում զննության է ենթարկվել «DAF» մակնիշի բեռնատար, որում հայտնաբերվել է ապօրինի փայտանյութ:

Այս մասին հայտնում է Հայաստանի հանրապետության Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը:

«Բեռնատարի վարորդ Ս.Ռ.-ն չունենալով համապատասխան փաստաթղթեր փորձել է տեղափոխել «հաճարենի» ծառատեսակից պատրաստված մոտ 19խմ տախտակ:

Ապօրինի փայտանյութով բեռնված ավտոմեքենան տեղափոխվել է Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք:

Դեպքի առթիվ հարուցվել է վարչական վարույթ: Գործի նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին»,-ասված է հայտարարության մեջ:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2024 թվականի օգոստոս ամսվա ընթացքում «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ թույլ տված հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը: Այս մասին հաղորդում են ՊԵԿ-ից:

2024 թվականի օգոստոս ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով 33 հարկ վճարողի մոտ արձանագրվել է «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում:

Հսկողական միջոցառումների արդյունքում, հարկ վճարողներին ընդհանուր առմամբ առաջադրվել է 13,9 մլն դրամի չափով տուգանք:

«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում թույլ տված հարկ վճարողների ցանկը՝ գործունեության համապատասխան օբյեկտների լուսանկարներով, կցվում է:

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԱՅԼԵՎՍ ԳԱԶԻ ՊԱԿԱՍ ՉԿԱ

Գերմանիան կարողացավ հաղթահարել ռուսական գազի պակասը:

Այս մասին հայտարարել է Գերմանիայի փոխկանցլեր, էկոնոմիկայի նախարար Ռոբերտ Հաբեկը:

Նա նշել է, որ այսօր գազի գներն ավելի բարձր են, միեւնույն ժամանակ, նախարարը վստահություն է հայտնել, որ Գերմանիայում գազը կրկին կէժանանա:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ

«Մեծ ֆինանսական երկխոսություն. վենչուրային կապիտալ եւ կապիտալի շուկաներ» խորագրով միջոցառումն անցկացվեց ՀԲԸՄ-ում: Մասնակիցները հնարավորություն ստացան բացահայտելու հայաստանյան start up էկոհամակարգը, ներդրումային հնարավորություններն ստարտափներում եւ բորսաներում ներդրումներ կատարելու ամբողջական գործիքակազմը: Միջոցառման կազմակերպիչներն էին Freedom Broker Armenia-ն եւ BANA Angels-ը:

Միջոցառման ընթացքում ելույթներով հանդես եկան Freedom Broker Armenia-ի տնօրեն Հովակ Հովակիմյանը, Freedom Broker Armenia փոխտնօրեն Էդուարդ Սաֆարյանը, BANA Angels-ի տնօրեն Սոնա Վեզիրյանը, Formula VC գլխավոր գործընկեր եւ համահիմնադիր Կարեն Վարդանյանը, Formula VC գլխավոր գործընկեր եւ համահիմնադիր Գրիգոր Հովհաննիսյանը եւ այլ փորձագետներ:

Նրանք մասնակիցների հետ կիսվեցին իրենց փորձով եւ գաղափարներով, խոսեցին կոնկրետ ներդրումային ռազմավարությունների մասին, որոնք օգտագործում են, ինչպես նաեւ ներկայացրին անձնական ներդրումային պորտֆելներ ստեղծելու գաղտնիքները:

«Վենչուրային կապիտալի եւ կապիտալի շուկաների ոլորտները շատ մոտ են իրար, բայց միեւնույն ժամանակ՝ շատ տարբեր են: Երկուսի դեպքում էլ խոսում ենք ներդրումների՝ բայց տարբեր ներդրումների մասին: Վստահ եմ, որ ունեցանք շատ հետաքրքիր քննարկում, որի ընթացքում մասնակիցները ոչ միայն հաճույք ստացան, այլեւ նոր գիտելիքներ: Նաեւ վստահ եմ, որ շատ միջոցառման շրջանակում նաեւ շատ հետաքրքիր մարդկանց հետ ծանոթանացանք, կապեր հաստատեցինք»,-նշեց Freedom Broker Armenia- ի տնօրեն Հովակ Հովակիմյանը:

«Ժամանակին շատ դժվար էր պատկերացնել, որ Հայաստանում առօրյայի մեջ կխոսեն ներդրումների մասին: Ուրախալի է տեսնել, որ ունենք մասնակիցներ, որ ներդրումներ են անում թե՛ արժեթղթերում, թե՛ ստարտափներում: Մեր երկրում վերջին չորս տարվա զարգացումները շատ մեծ են եւ արագ, եւ հուսով եմ, որ այդ դրական տեղաշարժերը նույն տեմպերով կշարունակվեն»,-նշեց Formula VC գլխավոր գործընկեր եւ համահիմնադիր Գրիգոր Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝ մի քանի տարի առաջ ներդրում ասելով միայն բանկում ներդրում անելն էին հասկանում եւ անշարժ գույք գնելը, հիմա շատ ավելի լայն հնարավորություններ կան, քան նախկինում եւ շատ հաճախ՝ ավելի արդյունավետ հնարավորություններ:

BANA Angels-ի տնօրեն Սոնա Վեզիրյանն էլ ներկաներին պատմեց հրեշտակային ներդրումային գործընթացներն ու էությունը՝ առանձնահատուկ ընդգծելով միջոցառման կարեւորությունը, այն է՝ նպաստել Հայաստանի բազմազան ներդրումային լանդշաֆտի ավելի խորը ըմբռնմանը եւ մասնակիցներին տեղեկացված որոշումներ կայացնելու գիտելիքներ տրամադրել:

Միջոցառման շրջանակում անցկացվեց վիկտորինա մասնակիցների համար. հաղթողները որպես նվեր ստացան միջազգային ընկերության բաժնետոմսեր:

«Մեծ ֆինանսական երկխոսություն. վենչուրային կապիտալ եւ կապիտալի շուկաներ» խորագրով միջոցառման մասնակիցները հնարավորություն ունեցան շփվելու մասնագետների հետ, սովորել նրանց փորձից եւ ընդլայնել իրենց ներդրումային հորիզոնները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԵԿ–Ը ԿԱՆԽԵԼ Է

Պետական եկամուտների կոմիտեի պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչությունը շարունակում է պայքարը Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների ապօրինի տեղափոխման դեպքերի բացահայտման եւ կանխման ուղղությամբ:

Օրերս Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն է ժամանել յոդացված աղ տեղափոխող ՀՀ հաշվառման բեռնատար: Տրանսպորտային միջոցի նկատմամբ իրականացված ռենտգեն տեսազննման արդյունքում կասկածներ են առաջացել, որ աղի պարկերի մեջ կարող են լինել մաքսային հսկողությունից թաքցված ապրանքներ: «Ագարակ» մաքսային անցման կետում իրականացված մաքսային զննման արդյունքում հայտնաբերվել է մաքսային զննությունից թաքցված տարբեր ապրանքանիշերի ընդհանուր 58750 տուփ ծխախոտ:

Փաստի առթիվ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 313-րդ հոդվածի հատկանիշներով, իրականացվում է վարչական վարույթ:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի «Հանրապետական անասանաբուժասանիտարական եւ բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը շարունակում է ընդլայնել եւ զարգացնել գործունեության շրջանակը:

ՍԱՏՄ-ից հայտնում են՝ 2024 թվականի ընթացքում հավատարմագրվել եւ շահագործման է հանձնվել Այրում-Բագրատաշենի սահմանային հսկիչ լաբորատորիան, որտեղ մասնագիտական վերապատրաստում անցած մասնագետների կողմից իրականացվում են միջատաբանական փորձաքննություններ: Կենտրոնը վերազինված է արդի սարք-սարքավորումներով, որոնց միջոցով առավել ճշգրտորեն իրականացվում են ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով պահանջվող փորձարկումները: Սա նաեւ նշանակում է, որ տնտեսվարողները խնայելու են ժամանակ ու ռեսուրսներ անհարկի ճգճգումներն ու բեռների կուտակումները հասցնելով նվազագույնի:

Շարունակաբար իրականացվում են աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման եւ վերապատրաստման դասընթացներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Առաջիկայում նախատեսվում է նաեւ բուսական ծագման մոնիթորինգի շրջանակում ընդլայնել հավատարմագրման ոլորտը պեստիցիդների մնացորդային քանակների որոշման ուղղությամբ:

Կարողությունների շարունակական զարգացումը լաբորատոր ծառայությունների կենտրոնի առաջնահերթություններից է:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Google-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդունել է Հայաստանում առաջին անգամ աշխատանքային այցով գտնվող «Google» ընկերության պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն Արտակ Պողոսյանը, ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության վարչության պետ Աստղիկ Մարաբյանը, ռազմավարական պլանավորման եւ մոնիթորինգի վարչության պետ Ռոբերտ Ստեփանյանն ու հանրակրթության եւ արտադպրոցական ծրագրերի մշակման եւ իրականացման բաժնի պետ Սուսաննա Ազատյանը:

Արթուր Մարտիրոսյանը ողջունել է հյուրերին նախարարությունում եւ կարեւորել «Google» ընկերության հետ հարաբերությունների զարգացումը՝ հաշվի առնելով ԿԳՄՍՆ ներգրավվածությունը Հայաստանի թվայնացման ռազմավարության 2021-2025թթ. ծրագրում, ինչպես նաեւ կրթական գործընթացների թվայնացման անհրաժեշտությունը:

Նախարարի տեղակալն ընդգծել է՝ Հայաստանը կրթական բոլոր մակարդակների բարեփոխումների ակտիվ փուլում է, որի շրջանակում մեծ տեղ է հատկացվում թվային տեխնոլոգիաների կիրառմանը, թվային գրագիտության զարգացմանն ու կրթական որակի չափելիության համար անհրաժեշտ գործիքների ներդրմանը: Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է՝ՀՀ կառավարությունը որդեգրել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կրթության հավասար հնարավորությունների ապահովման, կրթական համակարգի թվայնացման զարգացման քաղաքականություն, եւ այս համատեքստում «Google» ընկերության հետ համագործակցությունն առանցքային նշանակություն կարող է ունենալ:

«Google» ընկերության ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել ընդունելության համար եւ տեղեկացրել՝ իրենք մի շարք ծրագրեր եւ հարթակներ ունեն, որոնք օգնում են ուսուցիչներին, աշակերտներին եւ ադմինիստրատիվ աշխատողներին արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը, ինչպես նաեւ առցանց դասընթացներ, խորհրդակցություններ եւ հանդիպումներ: Այս համատեքստում կողմերը կարեւորել են նաեւ անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակը:

«Google» ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ արհեստական բանականության կրթության ներդրման միջոցներին: Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է՝ 2023 թ. սեպտեմբերից Հայաստանի 7 մարզերի եւ Երեւանի 15 ավագ դպրոցներում իրականացվում է «Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» փորձարարական կրթական ծրագիրը, որն ընդգրկում է շուրջ 500 աշակերտ ողջ Հայաստանից:

Անդրադառնալով մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ համագործակցության հեռանկարներին՝ «Google» ընկերության ներկայացուցիչ Օլգա Սկորոխոդովան խոսել է «Google Arts and Culture» հարթակի մասին, որտեղ ներկայացված է նաեւ Հայաստանի մշակութային ժառանգությունը: Նրա խոսքով՝ հարթակը հնարավորություն է տալիս միջազգային հանրությանը ծանոթանալ Հայաստանի հարուստ պատմությանը, արվեստին, մշակութային արժեքներին, ինչպես նաեւ հայկական մշակույթի տարբեր տարրերին՝ սկսած խաչքարերից եւ միջնադարյան ճարտարապետությունից մինչեւ ժամանակակից արվեստ:

Այս համատեքստում կողմերը պայմանավորվել են ուսումնասիրել Հայաստանի թանգարանների, մշակութային հաստատությունների եւ գրադարանների հավաքածուների թվայնացման հնարավորությունները, ինչպես նաեւ ամպային հուսալի պահոց ունենալուն վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաեւ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի հետ համագործակցության հեռանկարներին:

Ընկերության ներկայացուցիչները նշել են՝ Google-ի կողմից տրամադրվող բազմաթիվ գործիքներ եւ ծառայություններ հասանելի են նաեւ հայերեն, ինչը նպաստում է հայախոս օգտագործողների համար ավելի հարմարավետ եւ արդյունավետ օգտագործման միջավայրի ստեղծմանը: Նրանք նշել են՝ ջանքեր են ներդնում համակարգի շարունակական լավարկման ու կատարելագործման համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԱՏԻԿԱՅՈՎ ՖԻԼՄԵՐ

Չեխիայի Հանրապետության մայրաքաղաք Պրահայում կցուցադրվեն Արցախի թեմատիկայով ֆիլմեր:

Պրահայի Skautskф institut-ում սեպտեմբերի 30-ին կցուցադրվեն Հասմիկ Մովսիսյանի «250 կմ», Արման Այվազյանի «Քարը», Էմիլի Մկրտչյանի «Մայրենիք», Սաշա Քլամպի «Բլոկադա» ֆիլմերը:

Այս նախաձեռնությամբ հայ-չեխական CARM կազմակերպությունը միանում է «Արցախի թեմայով ֆիլմերի ցուցադրություններ» նախագծին, որը նվիրված է արցախյան վերջին տարիների իրադարձությունների հիշատակին: Ծրագիրը տեղի է ունենալու սեպտեմբերի 19-ից հոկտեմբերի 3-ը ուսանողական հաստատությունների եւ տարբեր կառույցների հետ համագործակցությամբ Երեւանում, մարզերում եւ Սփյուռքում:

Չորս ֆիլմերը ցուցադրվում են CARM-ի եւ PlatformDoc-ի համագործակցության շնորհիվ:

«Ուրախ ենք, որ Պրահայում ապրող հանդիսատեսի դատին կհանձնենք վերջին տարիների կինոնկարները՝ Արցախի մասին: Այս թեմայի միջազգային տարածումը շատ կարեւոր է մեզ համար, եւ նման միջոցառումների շնորհիվ մենք հանրության ուշադրությունը սեւեռում ենք մեզ համար կարեւոր այդ խնդրին»,-նշում է հայ- չեխական CARM կազմակերպության հիմնադիր տնօրեն Բելլա Կնյազյանը:

ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Կամերային երաժշտության ազգային կենտրոնի նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ սեպտեմբերից մինչեւ դեկտեմբեր Հայաստանում կանցկացվի Վահագն Ստամբոլցյանի անվան Երգեհոնային երաժշտության երկրորդ միջազգային փառատոնը:

Հայաստանյան երգեհոնահարների հետ միասին փառատոնն իրենց ներկայությամբ կզարդարեն Ջոշեմ Շուրմանը (Նիդերլանդներ), Էուջենիո Մարիա Ֆաջանին (Իտալիա), Պիտեր Կլայիներթը (Գերմանիա), Նարինե Սիմոնյանը (Ֆրանսիա), Սալվատորե Պրոնեստին (Իտալիա/Գերմանիա):

Հայկական երգեհոնային դպրոցը կներկայացնեն Աննա Բակունցը, Կարինե Հովհաննիսյանը, Հարություն Թագվորյանը, Թերեզա Ոսկանյանը, Հովհաննես Մանուկյանը, Արմեն Աղաջանյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Լուսին Սառաջյանը, Լուսինե Հարությունյանը, Վահագն Մարգարյանը, Մարինա Նահապետյանը, Արփինե Հարությունյանը եւ այլք:

Փառատոնային համերգները կանցկացվեն Երեւանում, Կապանում, Չարենցավանում եւ Գյումրիում:

Կիրականացվեն նաեւ Կոմիտասին եւ Ավետ Տերտերյանին նվիրված ծրագրային համերգներ: Կնչեն ինչպես դասական երգեհոնային, այնպես էլ հայկական երաժշտական գոհարների երգեհոնային մշակումներ եւ հայ հեղինակների երգեհոնային ստեղծագործություններ:

Փառատոնի ընթացքում կանցկացվեն վարպետության դասեր արտերկրից ժամանած երգեհոնահաների կողմից:

Սեպտեմբերի 25-ին, ժամը 19:00 Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կկայանա փառատոնի բացման համերգը՝նվիրված Կոմիտասի 155-ամյակին:

Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտության առաջին միջազգային փառատոնը անցկացվել է 2022 թվականին, որին արտերկրից մասնակցել էին Ֆաբիո Մաչեռան (Իտալիա), Լադա Լաբզինան (Ռուսաստան), Կոնստանտին Վոլոստնովը (Ռուսաստան), Ժան-Պիեռ Սթեյվերսը (Նիդերլանդներ), Եվգենի Ավրամենկոն (Ռուսաստան): Վերջին երկու երգեհոնահարները համերգներով հանդես էին եկել նաեւ Չարենցավանում ու Կապանում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՇԱԽՄԱՏ

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը Շախմատի միջազգային ֆեդերացիայի՝ ՖԻԴԵ-ի կողմից ճանաչվել է 100-ամյակի լավագույն թիմ:

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի առաջին փոխնախագահ Սմբատ Լպուտյանն էլ աշխարհում շախմատի կրթության եւ հանրահռչակման գործում ունեցած ավանդի համար ՖԻԴԵ-ի կողմից պարգեւատրվել է ոսկե մեդալով: Այս մասին տեղեկանում ենք ԿԳՄՍՆ պաշտոնական կայքից:

«Սմբատ Լպուտյանը հայ գրոսմայստեր է, որի առաջնորդությամբ շախմատը որպես առարկա ներդրվել է Հայաստանի դպրոցներում: Երկար տարիներ նա ղեկավարել է ՖԻԴԵ-ի Կրթական հանձնաժողովը՝ ամբողջ աշխարհում խթանելով շախմատային կրթության զարգացումը: Այժմ ավելի քան 25 մլն երեխա մասնակցում է շախմատի կրթական ծրագրին, եւ ՖԻԴԵ-ն առաջիկա տարիներին մտադիր է այդ թիվը կրկնապատկել»,- ասվում է Շախմատի միջազգային ֆեդերացիայի տարածած հաղորդագրության մեջ:

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը դարձել է Օլիմպիադայի եռակի հաղթող (2006թ, 2008 թ., 2012 թ.), Եվրոպայի եւ աշխարհի թիմային առաջնությունների ոսկե մեդալակիր (1999թ, 2011 թ.):

«Մեկ մարտիկը լավ է, բայց եթե ունես հիանալի թիմ, կարող ես շրջել աշխարհը»: Թեեւ ԽՍՀՄ թիմը կլիներ անպարտելի առաջատարը թե՛ տղամարդկանց եւ թե՛ կանանց կատեգորիաներում՝ ըստ Օլիմպիադաներում նվաճած մեդալների քանակի, ժյուրին որոշել է ընտրությունը կատարել ներկայում գոյություն ունեցող երկրների շրջանում: Հայաստանը գերազանցել է մյուսներին՝ հաղթելով երեք անգամ, իսկ Չինաստանը վերջին տասը տարում երկու ոսկե մեդալ է նվաճել»,- ասվում է Շախմատի միջազգային ֆեդերացիայի տարածած հաղորդագրության մեջ:

Պարգեւատրումներն իրականացվել են Շախմատի միջազգային ֆեդերացիայի հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ Համաշխարհային 45-րդ Օլիմպիադայի շրջանակում կազմակերպված հանդիսավոր միջոցառման ընթացքում:

Մրցանակները ստացել է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Արմեն Գեւորգյանը:

Հայաստանի կանանց եւ տղամարդկանց հավաքականներն այս օրերին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում մասնակցում են շախմատի Օլիմպիադային:

Տղամարդկանց հավաքականն անցկացված 8 տուրերում հաղթել է Մալթային (4:0), Անդորրային (3:1), Բրազիլիային (3:1), Շվեդիային (2,5:1,5), Ֆիլիպիններին (2,5:1,5), Անգլիային (2,5:1,5), պարտվել է Չինաստանին (1,5:2,5) եւ Հունգարիային (1,5:2,5): 9-րդ տուրում Հայաստանի թիմի մրցակիցը կլինի Գերմանիայի հավաքականը: Երկու թիմերն էլ ունեն 12 միավոր եւ բաժանում են 7-19-րդ տեղերը:

Կանանց Հայաստանի հավաքականը 9-րդ տուրում կմրցի Ուկրաինայի հետ: Երկու թիմերն էլ ունեն 13 միավոր եւ ԱՄՆ-ի հետ բաժանում են 4-6-րդ տեղերը: Կանանց Հայաստանի հավաքականը նախորդ տուրերում հաղթել է Տրինիդադ եւ Տոբագոյին (4:0), Մեքսիկային (4:0), Հունգարիայի երկրորդ թիմին (3:1), Վիետնամին (3:1), Չինաստանին (2,5:1,5), Մոնղոլիային (3,5:0,5) ոչ ոքի խաղացել ԱՄՆ-ի հետ (2:2), պարտվել է Հնդկաստանին (1,5:2,5):

Օլիմպիադայում կանցկացվի 11 խաղափուլ:

● *Սեպտեմբերի 23-ին՝ ժամը 19:30-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կբեմադրվի «Սիրո խոստովանություն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը:

Արամ Գաբրիելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան.

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անկախության ամենաբարձր աստիճանը նպատակի սահմանման անկախությունն է, որն ունի, օրինակ, ԱՄՆ ԴՊՀ-ն: Ելնելով տնտեսական քաղաքականության գերակայություններից՝ նա կարող է փոփոխել գլխավոր նպատակը: ՀՀ-ի դեպքում ԿԲ-ն օժտված չէ այս աստիճան անկախությամբ. ԿԲ-ի գլխավոր նպատակը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ եւ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով: Նպատակային ցուցանիշի ընտրության անկախությունը Հայաստանում սահմանվում է «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով: Ինչ վերաբերում է գործառնական անկախությանը, այն ենթադրում է, որ ԿԲ-ն ինքնուրույն կարող է կիրառել իր գործիքակազմը գլխավոր նպատակին հասնելու համար: ՀՀ ԿԲ-ն ունի այս աստիճանի անկախություն, ինչով օժտված են ոչ բոլոր երկրների ԿԲ-ները: Օրինակ՝ Անգլիայի ԿԲ-ն մինչեւ 1998 թվականը չուներ գործիքակազմի կիրառման ինքնուրույնություն. դրան միջամտում էր գործադիր իշխանությունը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Աղրանքներ եւ տրանսպորտային միջոցներ ներմուծելիս՝ հայտարարագրման ժամանակ, ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու դեպքում տուգանքի ի՞նչ չափ է սահմանված, եթե խախտումը առաջացնում է մաքսային վճարների պակաս հաշվարկում:

Հովհաննես Պողոսյան (50 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 203 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում, առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաեւ տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 212 հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները ենթակա են վերցման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այսօր Հայաստանի անկախության տոնն է: 33 տարի ատաջ՝ սեպտեմբերի 21-ին, ինչպես նախատեսվել էր դեռ կես տարի առաջ, Հայաստանում տեղի ունեցավ անկախության հանրաքվե, ընտրական իրավունք ունեցող բնակչության շուրջ 94, 5 տոկոսը մասնակցում, իսկ ավելի քան 99 տոկոսն ԱՅՈ է ասում անկախ, ազատ եւ ինքնիշխան պետություն ունենալու հայ ժողովրդի երազանքին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+8 + 11 +24 + 29
Կոտայքի լեռներ	+8 + 11 +25 + 29
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 30
Գեղարքունիք	+9 + 11 +23 + 28
Լոռի	+9 + 14 +23 + 27
Տավուշ	+12+ 17 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+9 + 12 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+15+ 18 +27 + 31

Արարատ	+17 + 20 +33 + 35
Արմավիր	+15 + 18 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+17 + 21 +33 + 35
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +29 + 32
ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Երեւան	+24 + 26 +30 + 32

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*